

Գ. ԿԵՆՑԱՂ ԵՒ ԶԲԱՂՄՈՒՆՔ

ՆՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՑԸ

Վաղը մարտի մէկն է. այդ օրից երկրագործը այլ ևս ղաղաքում չունի, մինչև աշնան ձիւնը գետին գնելը: Ամեն բան իւր տեղին հերթակալ կերպով, առանց իրար խառնելու ու շփոթելու, մէկը միւսի ետեից կարգով առաջ կը տանի:

Սյուսը նրա խամահանուկ գնալու օրն է. այդ պատճառով էլ լծկանը դուրս է հանել պտտում է, որ խամով չընկնին. իսկ միւս հարկաւոր բաների համար, նա օր առաջ իւր բալոր պատրաստութիւնները տեսել է:—Սերմացուն հորից հանել լցրել է ջուալները. մի աման սերմացու, մի սամոտէն ու մի հում հաւկիթ վրէժն դրած, ժամումը քահանային օրհնել է տուել: Օրհնած սերմը խառնել է ցանքի սերմացուի հետ, որ առատ ու պտղաբեր լինի. իսկ հաւկիթը պէտք է զարկէ մարալ եղի ճախտին ու սամոտէնն էլ փաթաթէ սամու վրայ, որ եղներին աչքով չտան:

Հետեւեալ օրուայ արտ տանելու սերմը նա լցրել է մի խարարի մէջ, ցանքի միջաբն էլ վրէժն է դրել ու բերանը ղաղիով ամուր կապել: Նա խոփն էլ է զօդել տուել ու ամրացրել է արօրի ոռոտամի վրայ. իսկ գործեալը, միւս հարկաւոր գործիքների հետ, դրել է խուրջինը, որ գործը խափան չ'մնայ:

Նրա հրաւիրակ արտուար քնից վաղուց զարթել և բարձրացել է օդի մէջ. թեւերը դողցուցող նման թափ տալով, իւր գոհացողական ու փառաբանական շարականներն ու մեղեդիքը երգել վերջացրել: Այժմ նա սկսել է ճլվալով խաղ ու աղաղ ասել և իւր սերելի երկրագործին հրաւիրել դաշտ, որ գնայ արտի մէջ 'նախ' առափ ու կորի բաշէ, ցանէ, և ապա մօճը բռնած ակօսի հետ դուռնդունալով գնայ դայ:

Բայց ափսոս, որ արտը հարոս է կամ խոզան, մի քիչ դժուար է վարվում ու մեր երկրագործի քիթը կախ է. որովհետև վախենում է, թէ եղները խամով ընկնին: Եթէ արտը լինէր հերկ կամ հերկոտ (հերկայաղի) այն ժամանակ նա ոչ մի բանի համար չէր մտածի ու հոգայ: Բայց ինչ էլ կուզէ լինի, նա կամաց կամաց կը վարէ և ահա մօտ է լաղաւին հասնելու, որ ամբողջ արտը վարելուց պրծնի ու գնայ ուրիշ արտ:

Ահա այն միւս կողմը նրա զբաղին կտաւատ, ասորիկ ու սևուկ է ցանոււմ, որ ձմեռը իրանց ուտելու և վառելու համար ձէթ հանեն ու տաւարի համար էլ այդ ընդեղէններից կոպտոն պատրաստեն, որ ուտեն գիրանան, հետեւալ տարուայ աշխատելու համար:

Իսկ ահա այնտեղ էլ սրանց միւս զբաղին է, որ հերկի մեծ փոցիւր լծել ու հիւրկը փոցիւում է: 1) Այն միւսն էլ նրա եղբայրն է, որ ետեւից տափանը լծել ու ինքը վերան կանգնած՝ արած տափանում է, որ երեսի կոշտերն ու փոսերը հարթուին — կոկուին: Այն լծի մէջ տեղից, երկու կոտի կամ պտօքի արանքից, բաշ արած փայտէ օղակն էլ կանարիֆն է, որ հօրէքի շղթան չը ծռուի այս ու այն կողմ:

Թող մեր երկրագործը իրան արտ ու ափը վարէ ցանէ ու աշխատհրի համար հաց պատրաստէ: Նրանից ետոյ, որը իր բօշ ու բարխանէն եայլէն աանի, որը քիրայ քեարվան, որը մէրի — մէշայ էրթան... մէկ խօսքով ամեն մէկն իրայ կարեւոր գործերով զբաղուին: Իսկ մենք տեսնենք թէ մեր շուրջը, բնութեան մէջ, այլ ևս ինչ հետաքրքիր բաներ կան:

Արի բարեկամ, մի փոքր ժամանակ էլ դաշտը դուրս գանք, այժմ գարուն է, մրսելուց ու հիւանդանալուց երկիւղ չկայ: Այնտեղ սկսեալ բանաւորից մինչև անբանին հասնելը՝ կեանք ու կենդանութիւն կայ:

Տես թէ, հարս, աղջիկ ու պատանիք, այդ գարնան բանաւոր ծաղիկները, ինչպէս են փռուել սար ու դաշտ. բանջրքաղը, շխպիկը կամ լեստը ձեռներին, հրեշտակային ձայնով լէլէ ասելով, որը կառ է քաղում, որը կանգառ, փշփշուկ, ջրակոտեմ, փիթիթիթի, սինձ, գառնանկաշ, թթուաշ, բողկուկ և այլն. որն էլ սկսեղ, կարմիր բանջար կամ բազկուկ է քաղում, որ տանին թաղայ թաղայ խաչն ու այնպէս համով աղցան անեն, որ մատներդ էլ հետը ուտես: Պատանիքն էլ իրանց սուր բհրներով ձնծաղիկ, չիկիտամ, գրծլիկ ու մատուկ են հանում, որ տանեն իրանց տանը մնացած փոքրիկ քոյրերին ու եղբայրներին բաժանեն: Իսկ փոքրիկ մանուկներն էլ փայտի կտորով գետինը փորելով ճնճղպաշար են ժողովում:

Սրանց լէլէին նախանձելով՝ առաջ են եկել լորը, ճթճթանը, արտուտը, հօտաղիսաբուկը, բրուկը, արօսը, գեղձանիկը, ծիծեռնակը, մանկղաթեն ու սարեկը... սրանք էլ իրանց լէլէն են սկսել: Բայց տարբերութիւնը նրանումն է, որ սրանց երաժշտութեան մէջ արհեստական ոչինչ չկայ, բոլորը բնական է:

Ահա այն կողմից, դալարեաց — թուփերի ու խոտերի միջից նոր գուլիս են բարձրացրել և մարդի երեսն իվեր քաղցրադէմ ժպտում ու ծիծաղում են բացուած և կիսախուկ կուժկոտրուկը, խնկանծա-

1) Հերկերի հողը փափուկ լինելով՝ դուրսնով կամ արօքով չեն վարում:

ղիկը, խնձորուկը, պուտպուտը, օշօշն ու գոմշիկոտօշը: Գարծես թէ սրանց նայելով, կամ սոցա վիճակին նախանձելով, ոտի են կանգնել և ուղուս են աւելի բարձր իրանց ցոյց տալ՝ սեփրոտ — կարմիր կա-
կաչը, կապուտ դանգակը, աղբրանց արունը, մայիսի ծաղիկը, թու-
թիէն, օձածաղիկը, հաւածիվէն, փոթոթը, տըտիպը, լուածալիկը,
վայրի մանիշակն ու այլ հազարաւորը:

Հանդուոր հարսներն ու աղջկերքը, քաղած բանջարները բողջայ
կապեցին ու ճօլակները շալակած վերադառնում են տուն, որ նանէի
եփած թանապուրն ու հաւլա ապուրը ուտեն:

Արի մենք էլ տուն գնանք, քաղցած ենք, տեսներ թէ նանէն
մեզ ինչ կտայ ուտելու...: Օ՛հ, դրանց ձեռք մի տայ բարեկամ, եթէ
ոչ՝ մեր նանէն շատ բարկացկոտ է, մէկ էլ տեսար՝ լափոտ շերեփը
գլխիդ այնպէս իջաւ, որ աչքերդ բնից դուրս եկան...: Այդ խաշիւն
ու փաւը՝ նա գութանաւորի համար է պատրաստել. մխլուն ու ձուա-
ծեղը՝ գութնի եղնարածների, կամ թէ չէ՝ նոր փեսի. այս քեալա-
ճօշը, բաղկով բօրանին ու քեալամով կօնջօլն էլ հիւրերի համար են:
Ուրիմն մեզ ուտելու համար մնում է մի քիչ խաւիժ, չլպուր, չոմբուկ,
պանիր ու լոռ: Արի այսօր սրանցով բաւականանանք, մինչև որ պա-
սի ելի շաբաթ օրը՝ նանէն մեզ հարիսայ, կորկոտ ապուր ու կաթ-
նապուր կուտացնէ...:

Հաց կերանք պրծանք. այժմ էլ մի փոքր գնանք Չլտրի լճի ափե-
րը ման գալու, տեսներ թէ ինչեր կան. Օ՛հ, նայիւ թէ կարմրա-
կոտուց սագը, կանանչ գլուխ բագը, երկարավիղ կարապի հետ մէկ
տեղ: Ընչպէս են ջրի երեսին թիալարում ու սողում, որ ամենեկին
ջուրը տեղից չի շարժվում. կարծես թէ կենդանի նաւակներ լինին:
Հապա սեազուլիս ու երկարոտ արագիւր, չախալ կռուկն ու ագաւ
ձկնկուրը, ձուկ ու օձ չը մնաց քծծեցին ու աչքերը դուրս տուին:
Տես թէ գանդաղ կրիաները, սնկլի անկաջները, խեչափառները,
ձկնականջները, գորտերի հետ միասին ինչպէս արագ ու աջող լող են
տալիս. այնպէս որ, հաւանական է կարծել՝ թէ մարդիկ զբանցից
են սովորել թենլող, ոտնլող, գորտնլող, մկնլող տալը և քամակների
վրայ, ջրի մէջ, տաշտ ու քեալակ ընկնելը: Իսկ այստեղ նայիւ, թէ
ինչպէս են իրար խառնուել մեծ ու փոքր ձկնները — լոքը, ճանառը,
կոճը, կապուտը, սեաձուկը, կողակը, մուրդին, կարմրախէտը, լէնքե-
րանը, թեփուկն ու փիշխուրը: Արի սրանցից մի քանի հատ վեր առ-
նենք եփենք, որովհետեւ այսօր մինչև երեկոյ ման պէտք է գանք,
տուն չենք կարող գնալ:

Հիմի էլ այս նուակով վեր բարձրանանք դէպի սարը. չոր է, թէ
սառը ջուր կը խմենք զովանալու՝ ու թէ մի քիչ պարզ ու մաքուր

օգ կը ծծենք հովանալու համար: Մանաւանդ թէ այնտեղից լաւ տեսարաններ կընկնին մեր աչքերին...: Բայց տես թէ թորթոխլին ու դզդունը ինչպէս են կանգնել լեռան գագաթի քարի վերայ ու իրանց գառան, աղուէսի ու նապաստակի որսը փառաց ի փառս ճաշակում: Ահա ուրուրն ու շալազանն էլ ինչ կողմից են գլխից ձեռք վեր առած աղունիկին ու ձնճղուկին կալմէջ արել և ուզում են թեկուել ու բնաջինջ անել...:

Բայց տես թէ, որքան հրաշալի են այս արտերը. նոր հաւթադ են եղել և հաղիւ թէ 2 3 շաբաթից յետ փիլոնից դուրս դան ու քիտտ քշեն և մածուն բռնեն ...:

Հիմի էլ մեր հարս ու աղջիկները արտերը ոտի տակ տրորելով, աղը դնելու ու թթուացնելու համար, արտերից քաղում են զօխ, ժախ, բէզայ, բոճախ, օղորմակօթ, բոլի, վարդապախ ժախ, դմի ու էրժնակ: Իսկ ձմռան տապակելու ու աղցանի համար, տես որքան շրէշ, աւելուկ, պարոնբանջար, թելուկ ու խրխնտուկ են հաւաքել: Բացի որանցից, աշնանը ձմեռուայ համար կը դնեն նաև քալամէ թթու, չոր թթու, կարմիր տակէ մաճառ, ճերմակ բաղկէ ճալիկ ու շախկամէ թթու...:

Բաւական է որքան այոտեղ մնացինք, արի գնանք այն ծմակի կաթնաղբրից, որ կրային խաւերից է դուրս գալիս, մի կուշտուկուշտ ջուր խմենք ու սէզները տրորելով՝ արխանկներից ցած իջնենք դէպի դաշտն ու կամաց կամաց գնանք խոտ հնձողների մօտ, տեսնենք նրանք ինչ են անում:

Այս շաբաթ խոտհնձի կամ Նղիակնայ պառն է, հարոսները շտապով քաղում են, որ չուտ պրծնեն ու խոտերը կրեն դէզ գնեն: Որովհետեւ այս տարի ոչ թէ կիսահախս՝ այլ թամամ քառասուն օր զօր ու գիշեր գութան պէտք է լծեն: Որը ուժով է, տաւարի ու մարդի կողմից քօմակ ունի, նա մենակ—տանստանու կը լծէ: Իսկ որի լծկանը որ պակաս է՝ մօտկամով կը լծէ...:

Բայց մեղք չէ բարեկամ, կամ ո՞ր Աստուածը կընդունէ, որ մենք այսքան դեղ ու դեղըանքի պէտքական խոտերը թողնենք ու անցնենք: Վաղը կամ միւս օր, Աստուած անէ դրնէ հեռու պահէ, հազար տեսակ ցաւ ու չօռ կը պատահին. էս է՝ վարցաւք կամ շոպի հիււանդ է, բարիբան է, կերցաւ կամ եաման եարա է, կարմիր քամի է, կապուտ հազ ու չոր հազ է, խլուրդի եարա է, իլանճդ է, դանճրդայ է, թաթարխամի է, սաճու է, դոլինճ է, ջրջրուկ է, էրէթիկ կամ մկնատամ է, հարինք կամ իտալ է, բոր ու քոս է, քաչիկ է, ծաղիկ է, կարմրուկ է, չիպան է, սև ցաւ է, մայասու է, դեղնութիւն է, իջուածք է, ձմուկ է, ծմրուկ է, քրտնխաշ է, մոլորոր է, ելփուք է, վերնուց է, բարակացաւ է և ուրիշ հազար տեսակ ցաւեր կան, ո՞ր

մէկի անունը տամ: Էգուց մէկէլ օր, որ ձիւնն եկաւ սար ու ձոր բլու-
նեց, մենք էլ էս քօլ ու քօսը—դեղ ու դարմանը, զրոյցից կարող ենք
ձեռք բերել, որ մեր հիւանդներին սաղացնենք...: Տես ինչ լաւ տուգաւ,
նուզի խոտ, մայրամասխոտ, եղան լեզու, պատպատ կամ աղշաւք,
զինարբու, կապուտ եօնճայ, խռնտատ, զանթափայ, դալի փուռչու-
լուկ, փռչուուկ, անթառան ծաղիկ, բաղատուկ և այլ տեսակ բոյսեր
ու խոտեր կան. արի ամենից մի քիչ քաղենք, տանենք տուն թող
չորացնեն պահեն: Աստուած պէտք չը բերէ, երբոր պէտք եկաւ՝
ամենն իրան տեղին գործ կածենք:

Այժմ վերկայ, մի քիչ շտապիր հասնինք այն գութանաւորի մօտ,
որ աչքդ հազար ու մէկ բարի տեսնի: Դէ, մի ծուլանալ, հինգ ար-
տաբօյ եկել ենք, մնացել է երկու գութանաբօյ. մի քիչ ուժ ու կուղ
արա, որ հասնինք նրանց մօտ:

Այն կոյմ նայիր, տես թէ հօրիքներն ինչպէս, կրթուած զի-
նուորների նման, ուղիղ գծով քաշոււմ են գութանը ու ետեից բաց
արած լայն ակօսը՝ կարծես դրախտի ճանապարհը լինի, իսկ թեկն
չուռ տուած սև հողը՝ Վենետիկում տպուած գրքի երեսներ, այնքան
որ մաքուր ու հատոր հատոր է:

Այնտեղ մօտիկ տուր, թէ երեկէքը ինչպէս շտապօք հերկի երե-
սից ժողովում ու գրպաններն են լցնում կոճղէզը, քեթմաթն ու
ատօլը: Այս վայրի արմտեղէնները՝ մեր գիւղացի երեխոց մրգե-
ղէններն են, սիոնք, սմանց կեղեղ կպչելով են ուտում ու ոմանք
հատիկ անելով: Աշունքը որ մօտացաւ երեկէքը կորուղ էլ քօլ կուտեն:

Տես բարեկամ, ինչպէս սրտով են քաշում խարաղանի, մաճքաչի,
ճիլթի, դարաղայիչի, գեօքակի, սարկեահի, հօրիքի ու քաքալուծի
եղները 1: Կարծես թէ իրանք էլ են հասկանում, որ պէտք է շու-
տով ռազելը դուրս գան ու հանգստանան, մինչև որ մաճկալը ձեռի
սափազէլով խոփի ու ձեռի վրայ կպած հողերը մաքրէ խոտակէ ու
նորից դառնան միւս թեկն գործ դնելու:

Այժմ լաւ նայիր, թէ ինչպէս հօրիքներն, իրանց հօտաղների հետ
միասին, կիսաշրջան կազմեցին ու պատրաստվում են աջ թեւը վարե-
լու...: Բայց այս չօյ վերան դաշտի մէջ, այն հեռու տեղից, ինչ երաժշ-
տութեան ձայներ են լսվում. լսում ես որքան քաղցր ու ներդաշնակ
են երգում: Ծ'կ դնանք նրանց մօտ... բայց չէ, մի քիչ սուս կանց,
յոթը... ճ'հ, հոգիս գրավում են, այլ ևս չեմ կարող համբերել, ես
կշտապեմ նրանց գտնելու, որ իմանամ թէ ովքեր են:

Մի շտապիր բարեկամ, փոքր ինչ համբերութիւն ունեցիր և այդ
երաժշտական համբերը այժմ մեզ մօտ կեկուռի...: Դեռ խօսքը չը վեր-

1 Գութանի ութը լծերի անուններն են:

ջացրած, ահա մեր Աբօն, որ մաճկալ էր, կոկորդը մաքրեց ու բարձր ձայնով սկսեց հռուովէլի տուտը, որին խմբով ձայնակցում էին ամբողջ գութանաւորները, մեծ ու պղտիկ առհասարակ:

Ահա թէ որոնք են այդ երգած հռուովէլները:

«Օրհնեալ է Աստուած,

«Էլի օրհնած է Աստծու զօրքը.

«Փառք քեզ Տէր:

«Սարինն հովիւ է,

«Տէրը քեզ գովիւ է:

«Թափ տուր թե արա,

«Շուռ տուր սե արա:

«Վարինք շատանայ,

«Տէրն ուրախանայ:

«Շալակ ես արեի,

«Շալակդ ռազէլ:

«Մաճկալը մաճին,

«Գինդերն անկաջին:

«Նուալ լուսացաւ,

«Քարին շատացաւ.

«Փառք քեզ, փառք:

«Միջակը գալիս է,

«Հօտաղը լալիս է:

«Հօրիքը ելաւ,

«Զօրանաւ հօտաղ:

«Վերքաղի արա,

«Շնչալուդ դուրբան,

«Մ'յ ռազիւ ա,

«Շալակդ ռազիւ ա:

«Վարինք արտ անենք,

«Գուշմանին դարտ անենք:

Փափագիդ հասնը, այժմ մի վախենայ, Աբօն բան չի տռէ, արի մի քիչ մօտ գնանք, տես թէ գութանը ինչպիսի մասերից է կաղմուած: Ա'յ, սա գութանի էչն է կամ օխը. սա էլ ուստամն է, էն միւսը խոփն է ու ձեկիչը. իսկ սա՝ թուրը, մաճը, մաճաղբէրը կամ ձագմաճը, մաճբուռը, թեքը, թեկաղբէրը, կաքաւը, կոռանը վզիկը, փանփալը, պլորը, խաւազանը, բարձը, գործեւորը, ճամբարակը, բնատէնը, ծէքատէնը, հորբատէնը, իշկիւրը, սիբբէն, ղօղէն, սունին, մեծ ակը, փոքր ակն ու լծները...:

Այս զբահաւորուած եկողները գիշերուան եղնարածներն են. կէս ժամից յետոյ գութանը վեր կը թողնեն, որ տաւարը տանեն արածելու. իսկ գութանաւորները քնեն հանգստանան: Բնութեան այս հարապատ որդւոց համար ոչ անկողին կայ ոչ այլ ինչ. իւրաքանչիւրը իւր չուխէն վրէն առած, թեք կամ մի քար բարձի տեղ ծառայացնելով, կանանչ գետնի վրայ անուշ քնում են, որ էն բաշտէն, մինչև քարվանդաճնի կամ լուսառտղի 1) գուրս գալը, լծկանը բերեն գութանի մօտ նորից լծելու:

Այսօր մենք էլ բաւական տեղ ոտքով ման եկանք, բեղարեցինք. արի գնանք տուն մի քիչ հանգստանանք, որ վաղը գութանի հալստը Աբօյենցն է, մի կուշտ լաշիլ ուտենք ու գնանք գէպի եայլէն, տեսնենք ինչ կայ - չկայ, քանի որ յարմար ժամանակն է: Եթէ ոչ՝ վաղը

1) Այս երկու աստղերը երկրագործի գիշերուայ ժամացոյցն են:

կամ միւս օրը երկրագործի հունձն ու կալը կընկնի և մենք այնպէս կաշկանդուած կը լինինք, որ այլ ևս գլուխ քերելու ժամանակ չենք ունենալ: Այդպիսի ժամանակ երկրագործը քիչ է մնում, որ մեռելը գերեզմանից հանէ բանացնէ, թող թէ մենք, որ կենդանի մարդէք ենք: Այն ժամանակ էս ազատ ու անհոգ ընկերներն էլ մի կտայ մեզ, որ բեգդատի պէս ուտենք խմենք ու քէֆներին ման գանք: Բայց գուցէ առես թէ, ես քաղաքացի եմ, ինչ բանի պէտք կգամ: Սխալ ես բարեկամ. երկրագործը այնքան բազմակողմանի պարապմունք ունի, որ ինձ ու քեզ նման քսան քաղաքացի էլ որ ձեռքն ընկնի, նա դարձեալ կաշխատացնէ: Քեզ կուղարկէ աշխատողների համար հաց ու ջուր բերելու. կը հրամայէ որ թիակով կամ փոցխով կալի զրազը վրայ դնես, ցաք ու ցրիւ գործիքները հաւաքես մի տեղ ու օրանով ծածկես: Երբեմն էլ, գիշերները թեղը քամելիս, քեզ կը պատուիրէ, որ աշտանակի կամ ճրագթաթի տեղ ծառայես—ձիթի ճրագը բռնես կանգնես, որ լոյս լինի: Ահա այսպիսի հարկերաւոր թեթեւ աշխատութիւններ ունի երկրագործը, որ պահել է ինձ ու քեզ նման փափուկ մեծացած մարդկանց համար, որպէս զի աշխատանքի մէջ շատ չը ճնշուինք ու լեթուինք...:

Խաշիւը կերար՝ փօրդ կշտացաւ. դէ հիմա ոտ ու ձեռք ամրացրու, որ ոտքով եայլէն գնանք: Տրեխներիդ սրեմները պինդ կապէ, դադանակը ձեռքդ առ ու ճանապարհ ընկնենք, քանի որ հով է, եթէ ոչ՝ շողին գլուխներս կուռի, կէս ճամբին կը մնանք...:

Մի քիչ էլ որ գնանք, կը հասնենք Աւթափի տակը—Ղզղունի ձորն ու քիչ կը մնայ եայլէն հասնելու: Բայց տես թէ ցաքուտների միջից՝ ինչպէս գլգլալով ու զզզալով ահագին խումբերով թռան կաքաններն ու չիւրբ. կարծես թէ ամեն միւր մի գոգամա հաւի մեծութիւն ունի, հապա այն փոքրիկ ծառատանի մէջ՝ տես թէ ինչպէս մէկ ծառից միւսն են թռչում՝ բազմագունեան ճանճորքը, շիկագոյն գոգոնը, մոխրագոյն տատրակն ու շլաքտունն կաշաղակը: Իսկ այս իշկաթնուկների և միւս թռչունների գլխին կպած մեծ ու փոքր օլթուն ոպրտակները որ տեսնում ես՝ օրօճներ են. զբանց մէջը պատենից կպած լարծուն ճիճուներ կան: Երբ այդ ճիճուները սատկում ու շարունում են, այն ժամանակ պատեանները ժողովելով ծակում ու իբրեւ զարդարանք, առանձին ձև տալով շարուածքին, կարում են փոքրիկ երեխանց արախճիկներին. երբեմն էլ հարսներն ու աղջկերբը իրանց միզարներն են սրանցով նաշխում:

Այժմ եայլին մօտացանք: Այն բլրի կողին երկացող տները, բարեկամ, մեր եայլի տներն են. ահա այն դաշտի մէջ երկացող տաւարի մեծ խումբը նախիրն է. այս ձորակի միջի խումբն էլ հէրմենկ,

կալել ու ծին էրինջներն ու մողիքն են, որոնց եօզ կանեն. իսկ այս՝ գէպի գեղը գնացող մանր ոտ խումբն էլ, այս տարուան փոքրիկ հորթերն են, որոնց տանում են մէր անելու:

Ահա մեր նանէն, մէկ ձեռքը կճուճ ու միւսը բուղայ բռնած՝ ջուր է տանում, որ աման — չաման լուանայ ու ձրձուձ հարէ:

Արի ներս մտնենք հանգստանանք, մի քիչ հաց ուտենք և յետոյ մի առ մի նանէի ունեցածների ու գործունէութեան հետ ծանօթացիր և տես թէ ինչեր կան աշխարհում:

Նախիրն եկաւ գիւղը լցուեցաւ. բայց նանէի խաթունն ու նանօն 1) չկան: Նանէի թուռը — ծամ կտրած ու քրքրուած 2) նարնգիւլը մի ակնթարթում գնաց գտաւ ու առաջ խառնած՝ վռնտելով բերեց արաւ աղալը: Յետոյ նարնգիւլը ցցերից կապած հորթերին մէկ մէկ մէր էր անում (ծծեցնում) իսկ նանէն կովկիթը ձեռին բռնած նրստում էր կթելու: Գաթը սպիտակ ամպի նման կովկիթի միջից փրփրալով վեր էր բարձրանում ու քիչ էր մնում որ թափի. բայց աշալուրջ նանէն իսկոյն տանում էր ու գատարկում պատրաստի վեր գրբած խաղրամանի մէջ և նորից գալիս կթելու:

Գովերը կթել պրծնելուց յետոյ, մի ետընկիթ էլ նարնգիւլն արաւ ու կովերը առաջ արած՝ տարաւ յանձնեց նախընտն և շտապօք վերադարձաւ տուն, որ կաթերը տեղաւորեն:

Դրացի խափչի 3) կնիկը իրանց կաթը բերեց քենճեց 4) ու յանձնեց նանէին և ինքը գնաց իր գործին:

Նանէն որ առաջուց կաթի տաշտերն ու կաւէ քարսանկները լուացել ու կաթնատանը շարել էր, բոլոր կաթը տարաւ լցրեց այդ տաշտերի ու քարսանկների մէջ և խաղրամանն ու կովկիթը ցօղուանքով ողողեց ու շուռ տուաւ կաթի վերայ:

Յետոյ նարնգիւլին պատուիրեց, որ գնայ բղիկը բերէ իրան մօտ, երեկուան փռած կաթի երեսները քաշելու համար, որովհետեւ հասել է: Իսկ ինքը գնայ ջրոճի միջի հումսերը լցնէ խնոցին ու կամաց կամաց հարէ, մինչև նանէն պանիրը քաշէ պրծնի: Նարնգիւլը հլութեամբ գնաց իր գործի ետեից:

1) Գովերի անուններ են:

2) Ժուլթեան Թիպոգրֆեր են:

3) Գաթի փոխառու կին:

4) Գաթը միմեանց փոխ տալու ժամանակ՝ լցնում են իրանց մի յայտնի ամանի մէջ ու մի ճիպտ ուղղահայեաց գիւղով զգուշութեամբ իջեցնում կաթի մէջ. կաթը ճիպտի որտեղ որ հասաւ, այնտեղ դանակով դծում են: Այդ դժած ճիպտով կաթի քանակութիւնը սրոշելուն առում են «քենճեց». իսկ դժած ճիպտին անուանում են «քենճ»:

Նանէն կաթերի երեսները քաշեց պրծաւ. տարաւ դրեց կաթնա-
տունը, որ լաւ թթուի յետոյ հարեն 1) ու ինքը թնտիրը վառեց,
մայա պղինձը 2) վրայ դրեց ու տաշտերով կաթը մէկ մէկ բերեց շուռ
տուեց պղնձի մէջ. փոքր ինչ տաքանալուց յետոյ, ապա կաթի քա-
նակութեան չափով մայա 3) լցրեց մէջը, որ մի քիչ յետոյ փոքրաւ—
լերդացաւ: Այդ ժամանակ Նանէն սկսեց երկու ձեռքով լերդացած
կաթը շինուրի 4) մէջ դարձնել այս ու այն կողմ: Երբ մասնիկները
լաւ խտացան—միացան միմեանց հետ, Նանէն քաջաբար վեր առաւ
պանրի գունդն ու տարաւ գցեց թառի վրայ, որ շինուրը քամուի:
Իսկ պղնձի մէջ մնացած շինուրը այնքան եփեց, որ լոռ դարձաւ:

Լոռը տեղաւորելուց յետոյ, եկաւ Նարնգիւլի հարած խնոցին էլ
դարտալից, որովհետեւ հասել էր: Գարագը վեր առաւ ջուկ բղիկի մէջ
տեղաւորեց և թանն էլ լցրեց կտակէ տոպրակները ու պատերի երես-
ներին դարկած ցցերից քաշ արաւ, որ քամուի—պնդանայ՝ յետոյ
չորթան շինեն:

Երբ բոլոր գործը աւարտեց պրծաւ, նոր Նանէի միտքն ընկաւ՝
որ հիւրերը ունի 5): Եկաւ բարովեց ու Նարնգիւլին հրամայեց, որ
հիւրերի համար հաց բերէ:

Ջօրանայ Նարնգիւլը, առաջուց հումսերով խաւիժն եփել պատ-
րաստել էր ու բժուտով դրել թնտիր՝ որ չը հովանայ: Լցրեց քառէն
ու մի սափի մէջ էլ նոր քաշած ջրաթաթախ պանրից դրեց ու փըն-
փուկ բոգոնների հետ միասին բերեց հիւրերին ու ուտեն:

Հետեւալ առաւօտ—արեւածագից առաջ, Նանէն վեր էր կացել ու
Նարնգիւլի հետ մի քանի կարեւոր գործով զբաղուած էին: Արեւ մի
քանի մղրախրոյ բարձրացել էր, որ նախիրը ղուշլուխ եկաւ: Գովերը
կթեց, կաթը առաջուան պէս տեղաւորեց ու թնտիրը մխեց (վառեց):
Բլղուրով փաւը վրայ դրեց եփելու, ուխալով սոխառածն էլ դաղեց
լցրեց փաւի վերայ: Յետոյ պուլիկով բաքմաղը թարեքից վեր բերեց
ու գդալով ցանեց ոշխարի կաթից մակըղած (մէրած) մածոնի վրայ:
հալած արդար եղը լցրեց տաք կաթի մէջ, խառնեց ու խափուժ շի-

1) Ծթէ հումսերը կարգին չը թթուի կարագ չի դուրս գալ:

2, Գանիր քաշելու մեծ պղնձին այսպէս են անուանում:

3, Մայա պատրաստում են հետեւալ կերպով. վեր են առնում տաւարի և ոշխարի
հում շրտանը (ստամոքսը) և Շոյնպէս սրոշ քանակութեամբ չամիչ, շաքար, բրինձ,
ուրց ու շիւղ. այս բոլորը միասին դնում են մի ամանի մէջ և վերան տաք ջուր
ածում ու մի քանի օր թողնում որ թթուի, կամ լաւ է տալի հոտի. ահա այս է
այն գեղեցիկ ու համեղ պանրի մակարդը:

4, Ձիճուր կաթնից բաժանուած ջրին են ասում:

5, Մինչև այդ ժամանակ թէկուզ հէրն էլ որ պատանքը ուսին դերեղմարից գար,
նա չէր ճանանչի:

նեց և հրամայեց Նարնգիւլին, որ հիւրերին հաց գնէ. որովհետեւ օրը ցօրեկ գառաւ՝ գեռ նըանք հաց չեն կերել:

Բաւական է օրքան կերանք, բարեկամ, թող նանէն իրայ ջահրէն մանէ, Նարնգիւլին էլ իրայ թեշիկն ոլորէ, իսկ մենք դուրս գնանք. որովհետեւ ոչխարը բէրը կթուելու է եկել: Գնանք տես թէ՛ ուլերն ու գառները հիմա ինչպէս են մկկալով ու բռաւալով իրար խառնուել բազարի ամբօխի նման. և շատերը, պատերազմական դաշտում դասալիք եղած զինուորների պէս, մայրերին կորցրած՝ ապուշի նման կանգնել ու շուարած այս և այն կողմն են նայում: Մտիկ տուր թէ, այս հոիկ, քոիկ ու կեաւրկ գառներն՝ և այս սատանի ձագ ուլերն՝ ինչպէս են այս ու այն կողմ վազում ու շփոթուած կանգնում մայում և օտար մայրերի ծծում, որոնք պողպատեղով վանում են...: Արդարեւ ինչ գեղեցիկ տեսարան է:

Ահա այնտեղ էլ հովիւը որձերի, սէիզների, շիշակների, թօլլոց ու գառների ոտքերը կապել գունդ ու կծիկ արել վեր է գցել և զըխըլըզով (մկրատ) բրդերը, գիւզամներն ու մագերը խուզում:

Արի այստեղից զգուշութեամբ հեռանանք, եթէ ոչ չօպան Հասոյի գիշերուայ ու ցերեկուայ հաւատարիմ ընկեր Բողուրը, Բասարն ու Մրօն մեզ այնպէս կը բզրկտեն, որ բուրդերս բարերարը կեղնի:

Մեր ժիր նանէն ձեռքի քուլէքն ու պատրոյգները մանել պրծել է. թելը կաժրաբի կամ վիլիանքի վրայ դուրս տուել կաժ շինել, Այժմ էլ քթոցի ձիւից ամուր բռնած աղալից շալակով թրիքը դուրս է տանում, որ խրխուր ձեռնթուխ թիւէ վառելու համար: Իսկ Նարնգիւլը՝ սանտերըն առաջին դրած բուրդ է գզում, որ յետոյ էլ անեղը, չաքն ու մատնչաւոր ձեռքն առնի՝ բամբակ գզելու, որպէս զի տան հագնելու համար շալ ու կտաւ հանցնեն:

Տես թէ ձմռան ուտելու ու ծախելու համար, նանէն որքան պանիր ու զայմազ է լցրել տկերն ու կճըճները: Այն միւս ամաններն էլ, որը կարագի խիար է, որն էլ չեշիլ ու թել պանիր է... այն մեծ բդիկն էլ բամած մածուն է և այն ծափերն ու չինիքն էլ հալած արդար եղ են... այն թարեքի վրայ շարած գնդերն էլ սապոն են, որ նանէն իր ձեռքով է եփել լուացքի համար. իսկ այն պատից կախած կանանչ հիւտերից մէկ քանիօր ճերմակ բանջար են ու միւսներն էլ աւելուկ, որ չորանալուց յետոյ նանէն կարգով կը գալէ ու կը պահէ: Բացի այս, նա իւր ժամանակին սոխուկ ու սխտորուկ էլ քաղել զըրկել է տուն, որ թթու գնեն:

Մէկ խօջով մեր նանէնց տունը շէն օճաղ է ու համբայ տուն. բացի հաւի կաթից, Ատածու տուած ամեն բարին կը գտնուի ոտպ, սիսեռ, բակլայ, քուրուշնայ, գլուկ, մարացորեն և այլն:

Կարծեմ արգէն ժամանակ է այստեղից դէպի տուն վերադառնալու. որովհետեւ այսօր գիւղից նոր եկողները պատմում էին, որ արտերը խնկագունեւ հասել են և վաղը կամ միւս օրը բոլոր դրացիք կերթան հնձելու. Ուրեմն մենք էլ աճապարենք տուն հասնել, որ տեսնենք թէ Արօն հնձի համար ինչ նախապատրաստութիւններ է տեսել ու կարգադրել:

Յուլիսի վերջերն է: Արօն գերանդին, մարանդուն, մանգաղը, լեսանը, եղամանը, խարտը, խորոմի չիպուղը, խորոմի շապիկն ու շաւվարը, փոցխերը, բարդով կեմ և այլն, բոլոր միւս գործիքների հետ պատրաստել է արտը տանելու համար:

Երկուշաբթի առաւօտեան լուսումթին՝ Արօյի աղէքը, թոռներն ու դրացիներից մէկ քանի փոխնակ հաց ու ջուր հետներն առած գնացին արաւ քաղելու: Արտը հասնելուն պէս, բոլորը շորերը հանեցին, մնացին միայն շապիկ վառտիքով. աղուխները գլուխները կապեցին ու ամեն մէկը իւր պատկանեալ գործիքն առած՝ գնացին արտի ձախ թեի վերի գլուխը կանգնեցան: Արօն որ հնձուոր էր, լեսանով գերանդին սրեց, երեսը խաշակնքելով, օրհնեալ է Աստուած առաւ և սկսեց գերանդին աջ ու ձախ փառտել — հնձել: Իսկ արտի մէջ տեղ տեղ պատահած կարճ ցորենը՝ մանգաղով էին հնձում: Փոցխաւորները նրա յետեւից շարքով լապը խոցխում — մտուրք էին անում. իսկ փոցխաւորներից մէկը այդ լապերից թափուլներ էր անում ու խորոմէին գալիս կամ ոլորում խորոմ էր անում ու տանում արտի մէջ եղն դնում, կամ թէ չէ կեմով խուրձեր էր կապում ու տանում բարդ դնում:

Այս կարգով շարունակեցին հունձը մինչև վերջին օրը: Բայց այն վերջին րօպէն, որ հազիւ մի քանի վայրկենի բան է մնացել, սր հունձը իսպառ վերջանայ, բանող մշակները Արօյի եախից բռնեցին, թէ արտախիտ առ: Արօն խոտաքաւ նրանց համար միրգ առնել: Թորք հունձը վերջացաւ. բանուորները մի հեղի կապեցին տարան նանէին աչքալուսի ընծայ՝ ու բարեմաղթութիւններ արին, թէ—«բարով — խէրով, ուրախութիւնով, դուրով—դրկցով, ցամաք աչքով և ուրախ որտով արժանանաք թաղայ հացը ուտելու:

Նանէն որ այս կեանքին անծանօթ չէր ու շատ անգամ էր տեսել այսպիսի բաներ. մանաւանդ որ գիտէր, թէ այն օրը հնձից կը պըրծենն, առաջուց նրանց համար կերակուրներ էր պատրաստել ու փաւի գլխին էլ 30 հակիթից շինած մի ձուածեղ դրած հացաւորեց մշակներին. որոնք հացը վերջանալուց յետոյ՝ «Աստուած հացին բարաբեաթ տայ, սեղաններդ լիառատ մնայ, աշխատաւորները երկար կեանք ունենան» առելով գնացին:

Այսօր հունձը վերջացաւ. այժմ հերթը կալինն է: Ամենից առաջ տան բոլոր անդամները հաւարուեցան գնացին կալի աթարը ժողովելու, որ կալի շուրջը պատի պէս ամուր շարեն 1): Մանտը ցանը ջոկ տեղ են թօփ անում ու խուշըին էլ ջոկ. յետոյ թխակ, ցախաւել առած կալը մաքրում — խոտակում են ու ջրում, որ հողոտ ու աւազոտ չը լինի:

Մինչդեռ սրանք այս չարշարանքի հետ են, Աբօն էլ տանը ուրիշ կարեւոր գործով է զբաղուած: Օրանը պէտք է կալը կրեն, բայց պատրաստի սէլ չկայ: Նա առաջ է բերել սէլի քաշողները (ղօլերը) ջամբերը, լակոտները կամ արլամէբը, անկաջը, ակոէբը, գետաղա գետակուն, անաջ գետակուն, առաջի կոփը, ետի կոփը, կոճակները կամ ասեղները, դազուկները, բասխուրը, թառները, տախտակները և այլն. ու քրտնփշած աշխատում է սէլը շինել պրծնել, որ գործը յետ չընկնի:

Վերջապէս սէլի թափըը շինեց աւարտեց. ակները զարկեց սրունու վրայ, բուլիքը ամբացրեց, լուծ ու փոկը սէլի գլխին լորխեց, լծի կէնճակներին հակիթ ու ձէթ քսեց, որ եղների ուսերը չը տօբուին: Այս ամենից յետոյ, ճոպանը, դրկեանն ու փոցիւր գրեց սէլի վրայ, սապոնլուղը կոփից քաշ արաւ, եզներն էլ լծեց ու հրամայեց, որ գնան բուրաստանից, խնձորատանից ու խաչգաթից 2): օրան բերեն կալը լցնեն:

Միւս օրը կալը արդէն օրանով լցուած էր: Աբօն հաւաքեց եղանները, հոռսէլիբը, թխակները, հալը, կառափը, կամբը և այլ հարկաւոր գործիքներն ու գնաց կալը: Թափած օրանը հաշան արին — կալ գրին. կամնատէնի մէկ ծայրը մալուխով ամբացրին կամբի գլխին և միւս ծայրերը փաթաթեցին լծերին. կալեկ ու ծին աշառները կամ լծելով սկսեցին աջ ու ձախ շուրջանակի կամբը պտտել, որ օրանը մանրի—գարման գառնայ ու ցորենը հասկից բաժանուի:

Գալը երես եղաւ, պէտք է չըջել: Ամենը մի եղան առած՝ սկսեցին իրար ետևից կարգով շարուած, արագութեամբ ամբողջ կալը չըջել — տակն ու վրայ անել: Այժմ կալը զըռմա է, պէտք է թխակով չըջել: Օրական 6—7 անգամ այսպէս չըջելով, կալը բոլորովին կը մանրի: Գառափը կը լծեն ու մանրած կալը քաշելով թեղ կանեն. այնուհետև առաջուան պէս, դարձեալ նոր կալ կը գնեն: Երեկոյեան, երբ թեղի յարմար բամին սկսեց փչել, իւրաքանչիւրը մի հոռսէլի առած կը բարձրանալ թեղի գլուխն ու կսկսեն էրնել: Երբ թեղն իջաւ — դօշակն ընկաւ ու նամուռն հաւաքուեցաւ մի կողմի վրայ, հարօ ու

1, Կան տեղեր որ այդ սովորութիւնը չկայ, ըստորում կուրեր չըջապատած են քարէ պարխապով:

2, Արտերի անուններն են:

աղջիկ սառաւորները կամ շառաւորները ձեռներին կռան ու մի կողմից ցորենը քօղառահան կանեն, մինչև որ տղամարդիկն էլ թեղը էրնելուց կը պրծնեն:

Այնուհետև Աբօն թէ՛ճի թիակը ձեռքը կառնի ու նամուռն հետ դհատէ վեր գցելով, որ միջի մղեղը քամին տանի, կսկսի մաքուր ցորենը բրգաձև շեղջել:

Աբօյի շեղջելուց անմիջապէս յետոյ, հարսներն ու աղջիկները քարմաղներն առած, հանդիպահայեաց կանգնելով, ցորենը մաքուր կը մաղեն: Իսկ տղամարդիկ մաղած ցորենը, որոնք բարէ կամ փայտէ ամբար չունին, սաքլամենելով գետնափոր հորերի մօտ կը տանին որ հորեն:

Աբօն մտել է հորն ու նրա տակը հաստ դարման է փռել, որ վերկից ցորենը շուռացնելով վաղեցնում են հորի ուղիղ կեդրոնում: Երբ ցորենը այնքան բարձրացաւ, որ հորի կողքերին (պատերին) հասնելու եղաւ, նա ցորենի ու պատի արանքը շուրջանակի կուղը լցնելով վեր կը բարձրանայ, որ հորի խոնաւութիւնը ցորենին չը ոչլտացնէ, մըլացնէ, կամ ծլեցնէ որ ածիկ դառնայ և կամ փափ:

Հորը լցուաւ բերնին դէմ առաւ. Աբօն երեսը հաստ դարմանով կը ծածկէ, ձեռքով խաշադրօշ կանէ և «Աստծու խէնն ու բարաքեաթը մէջն էդնի, աջն ու խաշը պահապան էդնի» ասելով՝ քարէ խուփը կը կռածէ հորի բերնին՝ ու հողը վրայ տալով և ոտքով ամուր տրորելով՝ կերթան իրանց բանին:

Գալը վերջանալու վրայ է. այս ձեռներինը յետի մնացած կալն է: Աբօն հրամայում է որ շուր ու փալաս բերեն աղուն փռեն չորացնելու, որ բնաղուն անեն...: Ցորենը չորացել է. հարսներից ոմանք կանգնած քարմաղով են մաղում, որ քարը ջովնուի, ոմանք նստած փռկեմաղով են մաղում, ոմանք էլ տեփրում են ու լցնում ջուալները, որ տանին ջաղաց աղալու: Մաղածի տականք ու գլխանքն էլ ջով տեղ են լցնում, որ հաւերի բաժին կուտն է:

Իսկ մեր Աբօն չալաղանի պէս գլխներին պարտովում է ու շտապեցնում, թէ շուտ արէք պրծէք, ամպերը գլխներին վերեր ալափուշիկ են խաղում, հիմի որտեղ որ է անձրեղ կգայ ու բոլորը ետադատար կանի: Ցիւրանցն էլ մի կողմից հրամայում է կամերը թողնեն, կալը ժողովեն — բուլուլ անեն, քանի որ անձրեղ չի եկել թռջել: Իսկ ինքը կարծես ծերունի չը լինի. ամեն բանի ձեռնարկելով. կամ սրան է օգնում կամ նրան: Վերջապէս Աբօն ամեն բան կարգին անելուց յետ, տղերանց հետ բնաղունը ջաղաց ուղարկեց աղալու ու ինքը սերիշ գործի ձեռնարկեց:

Գալը վերջացաւ. կտաւաւոր գեահրա արին. ձենձենը գիզեցին ու քօղառը կամ խղուզն էլ ծեծեցին պրծան, որ որա քեարտիկայ

ցորենից փոխինդ պէտքէ անեն... Դարմանն էլ քթոցով եւ շաթանով կրեցին, կամ կառափով քաշեցին մարագը:

Այսուհետեւ կայր կամ դաշտը այլ եւ ոչինչ գործ չունին. բոտ որում Արօյինց կողմերում աշնանացան չկայ, որ աշնանը դաշտային պտը պսակունք ունենան: Կը մնայ տնային պարապմունքները, որոնց հետ այժմ կարգով կը ծանօթանանք:

Արօն տաւարի դիւլիկի կողմից բոլորովին միամիտ ու անհոգ է. որովհետեւ այնքան խոտ 1) դարման ու եօնջա է հաւաքել գիգել, որ օխտը տաքի ուտացնեն շի հատին: Բացի այս, նա տաւարի փաղաղի կամ փուլի համար մի քանի սօմար էլ դարի է աղացել. իսկ ձէթը հանելիս, տես թէ քանի սրկի էլ կոպտոն կունենայ:

Ջինութեան կողմից Արօն նոյնպէս պակաս բան չունի. գլխատուն, գոմ, գոմի օտա, մարագ, շուագ, գհուկ, հորթնոց, մառան, քօխ — քօխտիկ ամենն էլ թամամ են:

Այժմ Արօն դեղդուած է տան գիւլիկով. նա աթարը կամ ոչխարի տարթը բերել դալաղ կամ ամբողջ է գրել, որի մէջտեղաւորել է ձեռքնթուլը, թիթենը, մանար ցանն ու քօղաւը: Նա եւ չէ մոռացել թոնտրի կպչանի համար մի քանի աէլ էլ գաղ բերել:

Աշնան ցրտերն ընկան. վաղը կամ միւս օրը մալը եայլից վեր կը գայ: Արօն մտքբանները ամրացրել, փտած կապերը փոխել ու կրկնաւորել անց է կացրել նրանց վրայ, որ տաւարը գալիս հազիւ լինի, ամենն իրան տեղը կապեն ու խառկեալա վեր չը վարեն գոմի մէջ, որ միմեանց վնասեն:

Նանէն էլ, որովհետեւ Արօյի թեի թեւը կերն է, նա էլ մի կողմից իրան վերաբերեալ տնային պակասութիւնները կը հոգայ, կարգադրութիւններ կանէ, որ էդուց սարի պէս ձմեռը դուռն առնելիս, բանի խեղճութիւն չը քաշեն: Ինքը փէշը կուտ լցրեց գնաց հաւերին կուտ ու ջուր տալու որ թաւին: Նա մէկ անգամ իր սլըլիկ ձէնով ջուր ջուր ջուր ձայն հանելուն պէս, էն բոպէին հաւերը այս ու այն քօշա պուճախից հաւաքուեցան նրա մօտ ու շրջապատեցին: Կուտը ցանեց գետին, ջուրը լցրեց կրէճը կամ գուռը ու ինքը մէջ տեղը կանգնած համարում էր: Բայց անպիպան գարափղիկ, գարախիկ, կանփրտիկ, փուփուշիկ, բրբուշիկ, չպտըրուն, փունփունլի հաւերը չկան...: Ահա որտեղից որ էր նրանք էլ եկան կուտ ու ջուր կերան խմեցին ու նանէն քըճճճճ տո՛ւն տո՛ւն անելով հաւնոցը արաւ ու գնաց իր գործին:

1) Խոտերի տեսակներն են—խափուկ, բուղդէի խոտ, որձ խոտ, փալախ, շէլթան օթի, գառան խոտ, ու իւմաղ:

Վաղը հաց պէտք է թխէ. այսօրուանից ակիւրը ամբարից կամ փեթակից 1) դուրս քաշել տուեց ու արմաղով մաղեցին խմորի տաշտի մէջ, ծրեկոյին խմորը հունցեցին ու պրծնելուց յետոյ, ձեռքով խմորի երեսին խաշ քաշելով, դաստախունով ծածկեցին, որ թրթուի: Էն բաշտէն նանէն շատ վաղ վերկացաւ, հարս ու աղջկան ձէն տուեց, որ վեր կենան խմորը գնդեն. իսկ ինքը գնաց մոխրը թընտրից դուրս քաշեց մոխրատի մէջ, աթարը բերեց թնտրայ շուրթը, թնտրը շէնքեց, անթեղը թաղած տեղից—մոխրի միջից հանեց, թնտրը մուխ գցեց ու թռաւ գնաց երգիկկալը յետ աշխաւ, քթոցը երգիկի ափին միջաշ դրեց ու կրկին եկաւ տուն: Հարսները խմորը գնդել պրծել էին. հրամայեց որ բադատը, ռաֆատէն, փարտիչը, անթրոցը, շիշը, ակիշը, թաթակիշը, գրտնակը, սեղանտախտակը ու մի աման ջուր բերին թնտրի մօտը հազիր անեն: Ինքն էլ կապուտ կտաւէ մխնոցը հագաւ, թենոցները թեւ քաշեց, դուրս ելաւ աղօթքանի առաջ երեսը խաշ հանեց, մի երկու ծունը դրեց, եկաւ թընտրը ետ առաւ, փարտիչով մէջը—կողերը սրբեց ու սկսեց հացը թխել: Ահա նանէի եփած հացի տեսակները. լօշ կամ լաւաշ, թափ-թափա, բոգոն, մատնքաշ, ծակուլիկ և այլն: Վերջն էլ կրակի վրայ մի քանի հատ փուռնիկ գցեց ու փէշը թափ տուաւ տեղից վեր կացաւ, որ հարսները տախտ ու տուն աւլեն, հորթեն—խոտակեն:

Տնական գործը տաւրտեցին. հիմա էլ հարս ու աղջիկ նստած տղամարդկանց համար չուխայ, շալվար, արխալուղ, չապիկ, կուռտիկ, ռբա ու չիկին թաւիկ են կարում. մի կողմումն էլ պաճիճ, պաճըճիկ ու գուրպայ գործում: Իսկ իրանց համար էլ սայա, կապայ, քաթիպայ, գոզնոց կամ նաշխուն միզար, թենոց, կըծկալ կամ սրտանոց կարում: Միով բանիւ ընտանեաց մէջ իւրաքանչիւրն իր առանձին պարագմունքն ունի և զբաղուած է:

2մեռ է. ձիւնը եկաւ դուռ ու երգիկ բռնեց. սար ու ձոր ձնով ծածկուեցան, բոլոր բնութիւնը համարեա մեռած դրութեան մէջ է: Դուրսը այլևս ոչ մի շարժում չկայ. ցրտի ձեռից բոլոր կենդանիք փախել մտել են իրանց որջերն ու ծակերը, որ պատուպարունն ու սատկելուց աղատուն: Մէկ խօսքով բոլոր արարածները սկսել են հանգստանալ ու դադարիլ: Քայց ընդհակառակը մեր գիւղացու շարժման ու գործելու օրերը կարծես նոր են եկել: Նա այսուհետեւ դեռ նոր մի քիչ օր ու արեւ պիտի տեսնի, քէֆ ուրախութիւն անէ, տղայ,

1, Փեթակը $2\frac{1}{2}$ արշ. բարձրութեամբ և $1\frac{1}{4}$ արշ. լայնութեամբ դարձանախան սպիտակ կաւից շինած մի քրտանկիւնի առարկայ է, որի մէջ գիւղացիք ակիւր կամ արմահէն են լցնում:

աղջիկ նշանէ ու կարգէ: Նա մինչև այսօր գործից աչք չի բաց արել, անգագար աշխատել ու գործել է, որ հիմա էլ այդ աշխատութեան արդիւնքը հանգիստ սրտով ու խաղաղ կեանքով վայելէ: Նրա գարունն ու ամառը նոր պիտի սկսուի, նորա համար վարդերն ու ծաղիկները նոր պիտի բացուին ու ինքը նոր զուարճանայ և զբօսնի: Որովհետեւ քաղաքացու համար եղած գարունն ու ամառը, նրա համար տանջանքի ու շարժարանքի օրեր էին: Այդ օրերում նա արեւի, անձրեւի, կարկուտի ու քամու առաջ էր զննում ու տապալկվում էր. գործըն ու աշխատանքը նորան այնպէս էին ճնշել ու խեղդել, որ ոչ հաց ուտելն էր խմանում, և ոչ քիթը սրբելու ու գլուխը վեր բարձրացնելու ժամանակ ունէր: Այսուհետեւ խեղճ գիւղացին բնութեան այդ հարազատ դաւակը, նոր մի քիչ շունչ պէտք է քաշէ ու հալալ հաց ուտելով հանգստանայ:

Ձմռան օրերից մէկն էր. աղօթքանը նոր սկսել էր ճղճղոտիւ, որ մեր նանէն ընից զարթնելով, տեղից վեր կացաւ, չախմախը զարկեց, քուրուրթի ծեղը կպցրուց ու ձեռքը մօտ թափը ափսոսելով ձիթի ճրագը ճրագթաթից վեր բերեց վառելու: Ինքը շորերը հագաւ, մի քանի անգամ սուտ հաղաց ու նրանից յետ առանձին առանձին գնաց տղերանց տեղաշորերի մօտ. առանց ձայն հանելու, ոտքով հարսնների կողքին բռնեց որ զարթնին, ու ինքը հեռացաւ:

Արօն էլ որ վաղուց զարթուն էր, տղերանց անունները տալով ձէն տուեց ու ինքն էլ—«մեղաւոր անարժան ծառէդ եմ, Տէր Աստուած. Դու քու ստեղծած հոգիդ չը կորցնես, Տէր... Առաւօտուայ բարի լուսու Քրիստոս թագաւորաց թագաւոր Աստուած, քու փէշն եմ բռնել, Դու գիտես... Դու իմ անասուններուս (որդոց) բանին գործին բարի աջողութիւն տա... աւուր փորձանքներէն ու անզգամի նըհախ չառէն Դու հեռու պահես...» կարճ աղօթքը քթի տակ փընփնթալով շորերը հագաւ: Գնաց գոմը ջրի գլխի մօտ կանգնաւ և «Հայր մեր» ստելով մի քանի շօր ջուր զարկեց երեսին—լուացուեցաւ, շուխի փէշով երեսը սրեց ու ճանապարհին աղօթք անելով դիմեց դէպի եկեղեցի:

Տղերը բնատեղից վեր կացան շորերը հագան. որը գնաց մաքագից քթոցով զարման բերելու, որը ցախաւելով տաւարի տակը սըրբեց—մաքրեց, որն էլ թրիքը շալակով տաքաւ բամբէն լցրեց: Մէկն էլ գոմի օտի օճաղը կրակ դրեց սաքքեց, բէշէրը թափ տուեց ու ալեց իստակեց, որ մի քիչ յետոյ Արօն ժամից իր ընկեր հալիւորների հետ կգան, չինի թէ բարկանայ իրանց վրայ:

Նանէն էլ իրան գործով է գրադուած. թնտիրը վառել է ու կե-

բակուր է պատրաստում որ ուտեն 1)։ Իսկ հարսներէն ամեն մէկն իր առանձին գործով է պարապած։ Որը նանէի կշտին կանգնած սպասաւորում է, որը տուն ու դուռն է աւլում, որը տեղաշարժերն է ժողովում ծալք դնում, որն էլ երեկուան կերակրի լափոտ ամաններն է լուանում, նարնգիւն էլ իր մատղաշ աղբօր տեղն է պատրաստում, որ քնացնեն։ Նա բօխչի մէկ ծայրը վրայ է բերել—ծալել ու եռանկիւնի ձեով փռել է օրօցքի մէջը, նրա վրայ, բարձի կողմը, փռել է թաթաշորը, թեւորը կամ թեւաթը. մէջ տեղը փռել է հողշորը ու տաք հողն էլ վրէն լցրել։ Բինգը կամ կապանը նոյնպէս պատրաստել է, որ մայրը երեխին բերէ քնացնէ։ Սրանից յետոյ գնաց պղտի հարսի երեխի ճօճքն էլ պատրաստեց պրծաւ ու մի կողմ քաշուելով՝ դանաւուզ չիկին թաւիկը ձեռքն առաւ կարելու, կամ շամխարի ու եղանշուի նաշխուն դուրէքը պրծելու, որ աղբէրտիւնքն հագնեն։

Նանէի կերակուրները արդէն պատրաստ էր։ Նա հացը զրկեց գոմի օթախը, որ տղամարդիքը հիւրերի հետ միասին ուտեն։—«Քանդուի էն տունը, որ օրական հինգ ղօնախ մէջը հաց չի ուտէ. էլ էն տան խէրն ու բարաքեաթը ինչ պտի էղնի» միշտ ասում էր նանէն իր սովորական խօսքերով։

Աղնիւ բարեկամ, Արօյենց դուռ ու երգիկը ինչքան որ պատեցինք, ման եկանք ու բաներ տեսանք բաւական է։ Քանի որ յարմար ժամանակն է, արի գնանք Արօյենց ջաղացն էլ տես, որովհետեւ այնտեղ էլ բաւականին հետաքրքիր բաներ կան տեսնելու։ Իսկ այնտեղից վերադառնալիս կը մտնենք ձիթիհանքը, որ նրանից էլ կարօտ չը մնաւ։ Բայց այսքանը գիտեցիր, որ ձիթիհանքը ջաղացի նման չէ. նա շատ յաղթանդամ ու առելի բան է։ Սակայն ոչնչից մի վախենար. ես բեզ հետ եմ ու ամեն բան ինձ վաղուցուանից ծանօթ են, որոնց հետ քեզ էլ մի առ մի կ'ծանօթացնեմ ըստ տեղւոյն։

Ուրեմն եկ այնտեղ ու տես, թէ ջուրը ինչպէս հարդի միջով հանգարտ գալիս է ու կանտարի գլխից շնաւերի» (օլուզների) միջով խշշալով ցած է իջնում ցւտունը։ Այժմ արի ներս մտնենք։ Ահա ուտէն բարը վեր է բերել կռանում է, որ ալիւրը լաւ աղաւ ծակի քաքը կռանել պրծել է, այդ ձեռքինը վրայի բարն է։ Այս քարերի միջի շաքչաձե տափակ հաստ երկաթները «կարմնջակ» կամ «տապաբակներն» են, որոց մէկի մէջ անց է կացրած ցցի վերին ծայրը. իսկ վարի ծայրին (ցւտունի մէջ) ամրացրած է չարխի թփը, որի փեռերին ջուրը սաստկութեամբ գիպելով՝ քարը սկսում է արագու-

1, Մեր գիւղացոյ սովորական ընտիր ճաշը առաւօտեան 8—9 ժամին է լինում, իսկ նրանից յետոյ կղած հացիկըսթը՝ պատահական է։

Թեամբ պտտիլ: Սըանց տակը շրի մէջ, գըտնվում է փայտեայ «տա-
փանը»: Այդ կողքի փոքրիկ կարճ սիւնակն էլ, իւր պարագայիւր հան-
դերձ, ջաղացի «ոտն» է, որ մի փոքր բարձրացնելիս՝ ալիւրը խոշոր է
աղում, իսկ ցածրացնելիս՝ մանր: Ուղիղ քարի կեդրոնում, չորս սիւ-
նեակների վրայ բարձր հաստաւումն էլ՝ ամբարն է, որի մէջ լըց-
րած է աղալու ցորենը և որից Թափուելով տակից կախած գուշի
մէջ, այնտեղից էլ հեռ գհեռէ Թափում է քարի ծակից վար ու
աղացվում: Իսկ ալիւրը Թափում է ալրտան մէջ, որտեղից նօրա-
շին ձեռաց կարճակոթ փոքրիկ Թիակով հանում լցնում է ջուալները:
Քայց տես թէ, քարի տակից նոր գուրս եկած ալիւրը որքան տաք է,
կարծես թէ յատկապէս կրակով տաքացրած լինին: Մեր ուստի կար-
ծիրով այդ տաքութիւնը ոչ թէ քարերի իրար սաստիկ շփուելուց է
առաջացել՝ այլ քարի վատութիւնից: Լաւ տեսակի քարը միշտ ալիւ-
րը սառը գուրս կտայ: Այս տայաղը, որի փայտէ կարմնջակի մէկ
ծայրը դրած է թերին և միւսը գուշի վրայ՝ դա «շախշախն» է, որ
քարը պտըտուելիս իրան վարի ծայրը քարին դիպչելով միշտ շարժ-
վում է ու հատիկները անընդհատ վայր Թափում և շիկչիսկալով ձայն
հանում: Սըա, և մանաւանդ իւր օգնական հին նալի կտորտանքների
պաշտօնն այն է, որ գանը (ցորենը) հատնելիս, եթէ մարդ չկայ
այնտեղ կամ քնած են, այն վրայի Թելով բաշ արած նալի կտոր-
տանքը, որոնց Թելի ծայրը ամբարի ցորենի մէջն է սեղմուած, կընկ-
նին քարի վրայ և ձայն ու աղաղակ բարձրացնելով՝ մարդկանց իմաց
կտան, որ գան նորից գան աւելացնեն:

Այժմ արի գնանք այն անկիւնը, տես մարդիկ ինչ են անում: Ցո-
րենը Թուշի լցելի են «գրինկն» ու ձաւար կամ կորկոտ են ծեծում:
բայց տեսնում ես, որ գնկի քարը ջաղացի քարի նման, ոչ թէ տա-
փակ՝ այլ գլխի վրայ է պտտվում: Այն էլ ոչ թէ կարմնջակով, այլ
փայտէ փոքրիկ լծակով է ամբացրած սիւնեակի վրայ: Նայիւր թէ նա-
նէն իր Թոռների հեռ միասին, Թիակներով ինչպէս արագ արագ
խառնում են ձաւարը, որ հաւասար ծեծուի և շուտ Թեփահան լինի
ու չը կտորտուի կամ փշրուի: Այստեղ նշանաւոր բան այլևս ոչինչ
չկայ. ուրեմն գնանք գէպի ձիթիհանքը:

Ձեռք տուր ինձ ու առանց խորխափելու աներկիւղ առաջ արի:
Թէև մի քիչ մութն է, բայց փոքր ինչ յետոյ աչքերդ կը լուսանան:
Արի այստեղ ուստայ Մանուկի մօտը նստենք մի թիչ խօսենք, մինչև
հերթը հաանի գննելուն: Ցաքացար ու աչքերդ էլ լուսացան. ուրեմն
ժամանակ է ամեն ինչ կարգին նայելու, որ գնանք, որովհետեւ էլի
գործ ունինք:

Ահա այս մարդը ձիթիհանքի կառավարիչ վարպետն է. որա ձեռ-

բով է կառավարվում ամբողջ ձիթիհանքը: Այս երեք անձինքն էլ «ջութերն» են, որոնց իւրաքանչիւրը իւր տեղում մի որոշ ծառայութիւն է անում: Այդ մէկ հոգին էլ ֆունճին է, որ կտաւատը բովում է ծեծելու համար: Այն միւսն էլ ջամուշին է, որ ձիթիհանքում աշխատող գոմէշներին պահում — պահպանում է: Իսկ այն քնոդ մարդը նօբատ-չին է, որ իւր կտաւատները բերել է ձէթ հանելու:

Այդ բոլոր աշխատաւորների վարձը, մինչև անգամ գոմէշների ու-տելու կոպտոնը, ըստ հնաւանդ սովորութեան, նօբատչին է վճա-րում, այն էլ ձէթ ու կոպտոն տալով: Երովհետեւ փողով վարձատրե-լու սովորութիւն չկայ: Նա ձիթահանքի տիրոջն էլ առանձին է վար-ձատրում, նոյնպէս ձէթ ու կոպտոնով:

Այս գոմէշներից մէկ քանիսը կալ են ծեծում, կտաւատը փոխինգ անելու համար: Բայց այն ծայրի երկու յաղթանդամ գոմէշները յատ-կապէ՛տ «պիւստի» ու զոչաւանքը հանելու համար են, որովհետեւ ամեն գոմէշ չի կարող այդ ծանրութիւնները վերցնել:

Հիմա արի այստեղ: Այս քառանկիւնի փոսը մեծ «եալաղն» է. ուր բոված կտաւատն է լցրած. այս էլ փոքր «եալաղն» է, որ հում կտա-ւատն է լցրած: Իսկ այս մէջտեղի որբատաշ քարով շինած կլորակն էլ «կալն» է, ուր բոված կտաւատը ծեծում — փոխինգ են անում: Գալի մէջ, մօտ 30 ոտք տրամագծով, բարձր կանգնածն էլ «կալա-քար» կամ «ծեծքարն» է: Գալի ուղիղ կեդրոնում, կալաքարի առա-ջեք անկուած փայտն էլ «ծառն» է, որի վրայ երկաթէ ցցով ամրա-ցրած է «նետիկը». իսկ նետիկի ծայրին կապած է լուծը, որ գոմէ-շը լծում ու կալաքարը պտտում են: Ահա տես, ջութը փոխինգը կա-լից կոտով հանեց ու տարւաւ լցրեց եալաղը. իսկ միւս ջութը այն բարձր տեղը նստած ոտքերը բաշ է արել «փոխնգտան» մէջ, փո-խինգը մաղում է ու «ճռճեմը» (տականքը) դէն լցնում:

Արի գնանք վերի ծայրից մէկ մէկ նայելով դանք հասնենք մին-չև վարի ծայրը: Այժմ լաւ նայիր. ուր տեղաւորուած են զօշատների ծայրերը՝ «օճաղ» է կոչւում: Օճաղի երկու կողմի հանգիպահայեաց զոյգ մեծ քարերը «չաքուրկէքն» են: Վերջիններիս վրայ հորիզոնա-կան դիրքով տափակ դրած ու աւելի քան 5 — 600 փութ ծանրու-թիւն ունեցող քարը՝ «բաղդաքարն» է: Նոյն վրայ չալ ու շախուսաւ շարած մեծամեծ քարերի ահագին կուտակութիւնը՝ «բեռն» է, որ զօշատները հանելիս ու իջեցնելիս բաղդաքարը տեղից չը շարժի: Զօշատների վերի ծայրին դրած ու բախտաբարին չղթայով կում պա-րանով ամրացրած տափակ կոճղիկները՝ «աղուէաներն» են. իսկ նո-ցա վրայ դրածները՝ «լակոտները»: Այս ոտքերիս մօտի (անմիջապէս զօշատների տակը) երկար ու նեղլիկ փոսը, որ մօտաւարտվէ՛ւ 3 ար-

շին խորութիւն ունի, որի վերին ծայրը հաստ տախտակներով կլոր
թնտրած է շինած՝ խաղնէն է, ուր ձէթը ճռիկ աղբիւրի պէս հո-
սում է նորա յատակում թաղած կարասի մէջ: Խաղնի ակերին ամրաց-
րած քառանկիւնի գերանները, կոշվում են «փարվաղներ»:

Արի մի փոքր գնանք կալի մօտ նոր բաներ տես, ապա կրկին ան-
գամ կը վերադառնանք այստեղ:

Քուրը մտաւ՝ փոխինգը լցրել են կալը. սւստէն մի քանի «դա-
բայ» 1) ջուր է լցրել վրէն ու իրար խառնել — խաշիլ են շինել: Գո-
մէշը լծել՝ կալաքարը այդ խառնած փոխինգի վերայ պատում են —
գելատու են անում, ու մի կողմից էլ ջութերը թիակներով խառնում
են, որ ջուրն ու փոխինգը միմեանց հետ լաւ միանան: Եւր փոխին-
գը հասել եղաւ ու թանձրացաւ, բերում են ուռննու կամ գետմաշի
հաստ ու բարակ ճիւղերից գործած «սալէքը» որոնց ակերին կեմ է
փաթաթած, փոխինգը լցնում են մէջները, ուրքերով տըրում ամրա-
ցնում են ու տանում խաղնի մէջ — «լազանի» վրայ կարգով իրար
վրայ դարսում, մինչև բարձրանում հասնում է խաղնի բերանից մի
երկու թղաչափ ցած:

Դէ հիմի արի գնանք խաղնի մօտ՝ տես ինչ են անում: Սալէքի
վրայ իրար կողքի ահա շարեցին մի քանի հատ սաթ (տափակ կոճ-
ղիկ) ու մեծ քօթուկը գրին սաթերի վրայ. «թիրբաշին» էլ հորիզո-
նական գերքով երկարացրին քօթուկի վրայ ու ջութերը բճկոխը կամ
գիմագիրը առան, մէկ ծայրը անցկացրին ղօշատների ու թիրբաշու
աւանքը և իրանք ձեւերով կամ փորերը զցած բճկոխի վրայ, խիստ
ուժով սեղմում ու ցնցում են, որ սալէքը նստին — տեղաւորին: Սրա-
նից յետոյ բճկոխի մէկ ծայրը գէմ տուին քօթուկին ու միւս ծայրը
խաղնի վարի գլուխը գետնում թաղած մեծ քարին, որ քօթուկն ու
թիրբաշին տեղից չը խախտուին — առաջ գան ու սալէքը ծռուին, որ
ձէթը բամուկուռն մեծ վնաս է:

Հիմա գործողութիւնը կը փոխուի. ուրեմն արի գնանք «կախտու-
նը» կամ «բուրդատուներ»: Քայց նախ քան նրանց գործ կատարելը,
տես թէ այստեղ ինչեր կան: Նայիք թէ այս 4 ահաւի ղօշատները,
որ ամեն մէկը համարեա 10 սաժէն երկայնութիւն ունին. (որոնց եր-
կուսը իրար վրայ, միւս երկուսն էլ առաջնոց պէս ղուգահեռական
ուղղութեամբ երկարացրած են). ինչ սոսկալի բաներ են: Սրանց
հաստ ծայրերին «փանփաներով» ամրացրած ու գութանի բնատէն-
ներով ամուր փաթաթածը՝ առջն է, որի մէջ տեղը ծակած ու բուր-

1, Ձիթհանքի չափերը հետեւեալներն են — «դարբայ» (20 ֆունտ.) «նուկի» (3 ֆ.)
«կէս նուկի» (1 1/2 ֆ.) «թուխտ» (1 ֆ.) «կէս թուխտ» (1/2 ֆ.)

դին կամ պողոտիկը անց է կացրած մէջը: Յուրդու վարի ծայրի, ջաղացի բարի մեծութեամբ, ամբացրած բարն էլ՝ «կախ բարն» է: Իսկ դրա տակը դրած բառակուտի հաստ երկաթի կտորը՝ «լիթոնն» է, որի վրայ, կախ տալիս, նստում—հանգչում է բուրդու վարի ծայրին ամուր հաստատուած երկաթէ ցիցը: Այս երկու հանդիպահայեաց և միջակ հաստութեամբ սները՝ «ճոճկաներն» են, որ ղօշատները վեր հանելիս, օգնում ու չեն թողնում այս և այն կողմ ցնցուելու կամ ճօճալու: Ղօշատներից կեմով բաշ արած փոքր կոճղիկն էլ նշանն է, որով իմացվում է ղօշատների բարձրանալու աստիճանն ու չափը...: Ցեսնում ես բարեկամ, կախտունը իւր կլորակ ձեռով, զիրքով, մեծութեամբ ու բարձրութեամբ, մեր հին ամբոցների, աշտարակների ու բուրգերին որքան նմանութիւն ունի. կարծես ճիշդ նրանց մակարդակով շինած լինին. միայն այն զանազանութեամբ, որ սա անսաշ է ու կոպիտ:

Այժմ հերթը ջոթերինն է. թող դրանք մի գործողութիւն կառարեն, որ մենք մասամբ ծանօթանանք նրանց խաղի հետ...: Ջօթերը եկան, կախքարի լծակը սր կախտան պատի մէջ ամբացրած էր, դուրս հանեցին թէ չէ՝ բարը բուրդու հետ միասին սկսեցին սաստիկ արագութեամբ պտտել. բայց ջոթերը լծակից ամուր բռնելով դէպի յետ կախ են ընկել ու արգելում, չեն թողնում պտտելու, եթէ ոչ այդ ահագին ծանրութիւնը ջաղացի քարի արագութեամբ պտոյա կգայ ու սաստիկ ցնցուելուց՝ մի բոպէում ամբողջ ձիթիհանը քարուքանդ կանի... Մի կողմից էլ խեղճ ջոթերը քարի հետ պտտուելով, ջերմեռանգօրէն ու երկկողմութեամբ բարձրաձայն աղօթում են—«օգնե՛տե՛կան Աստծուն, պահապան Աստծուն, Տէր դու բեռմակ էղնիս, Աստուած դու անմիտս անքեատար պահես»: Այս ժամանակ ղօշատները հետ դհեռէ մի քանի բոպէում ճռճալով վեր են գալիս իջնում ու այնպէս սաստիկ սեղմում թիրբաշուն ու քօթուկին, որ համարեա սալէքի մէջ եղած փոխինդի ամբողջ ձէթը միանուազ քաշվում ու բարակ աղբիւրի նման ճլճալով վազում կարասի մէջ:

Այնտեղ խաղնի մէջ նայիւր, որ ջոթը կաւէ ձիթի ճրագը բռնել մտիկ է տալիս, թէ ձէթը կարասից չը բարձրանայ ու դուրս թափի...: Ցես թէ լինչպէս պինդ ու գեղին ձէթի աղբիւր է վազում:

Մի առ ժամանակ ղօշատները այսպէս կախ կտան, մինչև որ բոլոր ձէթը քամոյի, յետոյ գոմէշը լծելով ղօշատները վեր կը հանեն ու քամուած փոխինդը, որ աղարի նման իրար է կպել, որին «բուսպ» կամ «կոպտոն» կասեն, սալէքով խաղնից դուրս կը բերեն ու տանելով տուն՝ տաւարին կուտացնեն, որ խոտից ու դարմանից տառնապատիկ աւելի գերացնել գիտէ:

Մըանով մեր երկրագործի կեանքը մասամբ պատկերացրինք, այժմ դառնանք նրա միւս կողմերից մի քանի օրինակներ տալու:

ՕՐԻՆԱԿՆԵՐ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԲԷՋ ԵՂՆԾ ՊԼՑՄԱՆՆԵՐԻՑ

Երկրագործութիւնը մեր երկրում ընդհանրապէս պարունակում է իր մէջ մի քանի կարևոր պայմաններ, որոնք գործադրելով՝ երկրագործի աշխատանքը մասամբ թեթևանում է և բաւականին օգտաւէտ է նրա համար: Եթէ իւրաքանչիւր տուն միայն ինքն իրանով ձեռնարկէր գործի, այն ժամանակ երկրագործութիւնը շատ անաջող պայմանների կը հանդիպէր, որովհետև մեր երկիրը Եւրոպայի նման հարուստ չէ, թէ գործը հեշտացնող երկրագործական գործիքների 1) և թէ նիւթական կողմից, որ կարողանային առանձնապէս—ամեն մինը իրայ համար գործել: Այս իսկ դժուարութիւնները միշտ ի նկատի առնելով, երկրագործները մի քանի ծանր ու դժուար պարագաներում, միմեանց փոխադարձ պայմանական օգնութիւն են տալիս, որպէս զի կարողանան ըստ չափու կարողութեան օգտուիլ: Այդպիսի պայմանական գործերից մինը մեղաւորում գութան լծելն է, որը յիշուի շատ դժուար էր, եթէ բոլոր ծանրութիւնը բարդուէր մի ընտանիքի վերայ:

Գութան լծելու համար հարկաւոր է 10—12 զոյգ եղ ու գոմէշ և 8—10 հոգի մարդ, որ հնար լինի մեր կողմերում գութան բանացնել: Իսկ այդքան պատրաստութիւն մի ընտանիքում շատ դժուար է գտնել: զրա համար էլ հետևեալ պայմաններով են լծում գութանը:

- 1) Միզանում համարեա դեռ չը գիտեն, թէ Եւրոպայում երկրագործութեան մեծ մասը, ոչ թէ մարդով՝ այլ կատարելագործուած մեքենաներով են կատարում: Չեղջին տարիքը, բարեմիտ մարդկերանց խօրհրդով, երկրագործներից մի քանիսները, թէպէտ փորձի համար երկաթէ գութաններ բերել տուին Եւրոպայից, բայց նրան էլ չը հաւանեցին, թէ «մեր պապական հին գութանի նման չի վարում»: